

## ՆԵՐՈՒՄ ԽՆԴԵԼՈՒ ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆՆ

Քու խաղաղութեամբդ, Հոգի՛ Սուրբ, ճշմարիտ Աստուած, որ վեր է ամէն միտքէ ու խորհողութենէ, մխիթարէ՛ մեզ՝ քու ծառաներդ, ընդունելով մեր աղաչանքը: Դուն՝ որ բարերար ես, ջնջէ՛ մեր յանցանքներուն արժանի ահաւոր պատիժը: Ներողամիտ գտնուէ եւ լսէ՛ մեզ, քաւէ՛ եւ ներէ՛ մեր մեղքերը: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հօրը եւ Միածին Որդիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

## ՕԳՆՈՒԹԻՆ ԽՆԴԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Քու խաչդ թող մեզի ապաւեն ըլլայ, Տէ՛ր Յիսուս, երբ Հօրը փառքով երեւիս՝ լուսաւոր ամպերու վրայ: Այն ատեն թող ամօթով չմնանք մենք՝ քեզի յուսացողներս, այլ քու մեծ գորութեամբդ ուրախանանք՝ քու աջ կողմդ բազմած, իբրեւ լոյսի որդիներ եւ փրկութեան ժառանգորդներ:

Օգնէ՛ մեզի, Տէ՛ր, օգնէ՛ մեզի, ո՛վ մեր փրկիչ Աստուածը, քու մեծ անունիդ փառաւորութեան համար. Տէ՛ր, փրկէ՛ մեզ եւ քաւէ՛ մեր մեղքերը, քու սուրբ անունիդ համար: Սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ պարսպուած եւ խաղաղութեան մէջ պահէ քեզի ապաւինած եւ քեզի յուսացող ժողովուրդդ: Փրկէ՛ մեզ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն: Արժանի ըրէ՝ որ գոհութեամբ փառաւորենք քեզ, Հօրդ եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԺԱՄԱԳԻՐՔ